ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-7/59-1

ք. Երևան 05-ը նոյեմբերի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մոսէքսո» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Կ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակի, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 19 588 680 (տասնինը միլիոն հինգ հարյուր ութսունութ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 15.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

6.8 Բացասական եզրակացության դեպքում, համաձայն ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի 30.08.2019թ. No1042/ԳՇ հրամանի, մատակարարի կողմից, բացի պայմանագրով նախատեսված տույժ-տուգանքներից, պետք է փոխհատուցվեն նաև հետազոտությունների և փորձարկումների համար իրականացված ծախսեր՝ ըստ փաստացի ծախսերի հաշվետվությունների՝ հիմք ընդունելով ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի կողմից հաստատված՝ հետազոտությունների և փորձարկումների վրա ծախսվող նվազագույն դրամական միջոցների ցանկով սահմանված գումարները՝ մասնավորապես. յուղերի համար (1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժիններ)՝ 8500 դրամ, քսուքների և հատուկ հեղուկների համար (3-րդ, 4-րդ և 6-րդից 10-րդ չափաբաժիններ)՝ 8000 դրամ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորիությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	«Մոսէքսո» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, ք Երևան Նար-Դոս 75
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04214892
ՀՀ պաշտպանության նախարարության	Տնօրեն
ՆՏԱ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-7/59-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Ռ-մակնիշի/	ՏՊ 38.1011282-89 Ղեկի հիդրոուժեղացման և հիդրավլիկ համակարգերի համար - կինեմատիկ մածուցիկությունը 100°C ՝ 5.0մմ²/վ-ից ոչ ավել, - կինեմատիկ մածուցիկությունը 40°C ՝ 17-22մմ²/վ, - կինեմատիկ մածուցիկությունը -20°C ՝ 1300-ից ոչ ավել, - բռնկման ջերմաստիճանը՝ 163°C -ից ոչ ցածր, - սառեցման ջերմաստիճանը՝ -45°C -ից ոչ բարձր, - ջրում լուծվող թթուների և հիմքերի պարունակությունը՝ թույլատրելի է հիմնային ռեակցիա, - մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը ՝ 0.01%-ից ոչ ավել, - մոխրայնություն՝ ոչ պակաս 0.6, - կորոզիայի բացակայություն, - ջրի պարունակությունը՝ բացակա: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով
2	Հակակոռոզիոն յուղեր /Կ-17/	ԳՕՍՏ 10877-76 Լեռնային և գունավոր մետաղներից մասերի և պահեստամասերի երկարատև պահպանության համար: - արտաքին տեսքը՝ յուղոտ մածուցիկ մուգ շագանակագույն գույնի հեղուկ, - կինեմատիկ մածուցիկությունը 100°C դեպքում՝ 15.5մմ²/վ - 21.0 մմ²/վ - սառեցման ջերմաստիճանը՝ -22°C -ից ոչ բարձր, - մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ 0.07%-ից ոչ ավել, - մոխրանյություն % ՝ 1,35-2.4. - պաշտպանիչ հատկություններ՝ դիմանում է, - ազատ օրգանական թթուների զանգվածային բաժինը՝ ոչ ավել 0.4%. - ազատ հիմքերի (ալկալիների) զանգվածային բաժինը NaOH-ի հաշվարկով՝ ոչ ավել 0,05%. - ջրի մասնաբաժինը՝ բացակա: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով
3	Քսուքներ /Գրաֆիտային/	ԳՕՍՏ 3333-80 Մեծ ծանրաբեռնվածությամբ դանդաղընթաց մեխանիզմների սահքի շփման հանգույցների, տրակտորների և մեքենաների կախոցների, բաց ատամնանիվային փոխանցման տուփերի յուղման համար: - միասեռ քսուք ՝ մուգ շագանակագույնից մինչև սև, - կաթիլընկման ջերմաստիճանը՝ 77°C-ից ոչ ցածր, - պենետրացիան 25°C դեպքում՝ 250 մմ/10-ից ոչ պակաս, - կոռոզիայի բացակայություն, - ջրի զանգվածային բաժինը՝ 3.0%-ից ոչ ավել: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 25 լ-ոց տարաներով
4	Քսուքներ /Քսուք No 9/	ՏՊ 38.001116-84 Ավիացիոն քսուք՝ շփման՝ հատուկ հանգույցների համար: - միատար հեղուկ քսուք՝ բաց դեղինից մինչև բաց շականակագույն, - ցրտակայուն,ջրակայուն և կոնսերվացիոն հատկությունները՝ բավարար, - միատարր քսուք շականակագույն գույնի, - կաթիլընկման ջերմաստիճանը՝ 92°C -ից ոչ ցածր, - մեխանիկական մասնիկներ առկայությունը % ոչ ավել՝ 0,1, - ջրի պարունակությունը՝ հետքեր, - կորոզիոն ազդեցությունը մետաղների վրա 20-25°C 72ժ շարունակ՝ դիմանում է - աշխատունակությունը՝ -60°C - +80°C: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 1 լ-ոց տարաներով

5	Հակակոռոզիոն յուղեր /Ակոռ-1/	ԳՕՍ 15171-78 Տարբեր տեսակի միներալ յուղերի պաշտպանիչ (կոնսերվացիոն) հատկությունների լավացման համար հավելանյութ: - յուղային հեղուկ մուգ շականակագույնից մինչը սև,բարակ շերտում թափանցիկ, - կինեմատիկ մածուցիկությունը՝100^{0}C դեպքում՝ 65 մմ^2/վ-ից ոչ ավել, - հիմնային թիվը ոչ պակաս 38 մգKOH/գ, - ջրի առկայությունը՝ բացակա, - մոխրայնություն 3.6-5.0%, - պաշտպանիչ հատկանիշ՝ դիմանում է, - մեխանիկական մասնիկների առկայությունը ՝ ոչ ավել 0.08%: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով
6	Քսուքներ /ԳՕԻ-54պ/	ԳՕՍ 3276-89 Քիչ ծանրաբեռնված շփման հանգույցների յուղման համար. ա/թ մեխանիզմների, հրետանային զենքի, մեխանիզմների և սարքերի կոնսերվացման համար, - միատար քսուք բաց դեղինից մինչև մուգ շականակագույն, - կաթիլընության ջերմաստիճանը՝ 61^{0}C -ից ոչ ցածր, - պենետրացիան 25^{0}C դեպքում՝ 200-245 մմ/10, - կոռոզիայի բացակայություն, - թթվային թիվ՝ 0,6-0,9մգ KOH/գ - ջրի պարունակությունը՝ բացակա, - մեխանիկական մասնիկների մասնաբաժինը՝ ոչ ավել 0.015% - ամրության սահմանը 20^{0}C դեպքում՝ 200-600 Պա Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 25 լ-ոց տարաներով:
7	Հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ /Ամորտիզացիոն ԱԺ-12տ/	ԳՕՍ 23008-78 Ամորտիզացիոն հեղուկ, անվավոր տրանսպորտի և հատուկ մեքենաների համար - կինեմատիկ մածուցիկությունը 50^{0}C ՝ 12 մմ^2/վ-ից ոչ պակաս, - կինեմատիկ մածուցիկությունը 100^{0}C ՝ 3.6մմ^2/վ-ից ոչ պակաս, - կինեմատիկ մածուցիկությունը -40 ^{0}C ՝ 6500 մմ^2/վ-ից ոչ ավել, - բռնկման ջերմաստիճանը փակ տիգելում՝ 165^{0}C -ից ոչ ցածր, - սառեցման ջերմաստիճանը՝ -52^{0}C -ից ոչ բարձր, - մեխանիկական մասնիկների առկայությունը՝ բացակա, - ջրի զանգվածային բաժինը՝ բացակա, - կորոզիայի բացակայություն, - հեղուկի գելոորշիացումը 100^{0}C, ոչ ավել 0.1%: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի:
8	Քսուքներ /Մածուկ ԱԼԿՄ-1/	ՏՊ 6-10-1933-84 Շահագործման ընթացում մինչև 150^{0}C տաքացող կամ կարճաժամկետ (2-3 ժամ) 200-250^{0}C տաքացող մետաղյա դետալների միացման մասերի պաշտպանության համար - մածուկի պայմանական մածուցիկությունը՝ քսիլոլով հետ 70:30 հարաբերությամբ խառնուրդի 20±5 ^{0}C ջերմաստիճանում՝ 24-40 վրկ - չցնդող նյութերի մասնաբաժինը՝ 99±1%, - թթվային թիվը՝ ոչ ավել 7.5 մգKOH/գ: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5կգ-ոց տարաներով:
9	Քսուքներ /Քսուք ՍԱՊՖԻՐ (Վնիի ՆՊ-261)/	ՏՊ 38.1011051-87 - հարթ քսուք՝ առանց գնդիկների՝ կապտամոխրագույնից մինչև սև,թույլատրվում է կանաչավուն երանգ. - կաթիլընկման ջերմաստիճանը՝ 250^{0}C -ից ոչ ցածր, - մածուցիկությունը -40^{0}C դեպքում՝ ոչ ավել 3000Պա.վրկ - ցնդելիությունը 1 ժամում 150^{0}C-ի դեպքում՝ ոչ ավել 3%, - կոլոիդային կայունությունը՝ ոչ ավել 10%, - ամրության սահմանը 50^{0}C դեպքում՝ 300-800 Պա - մետաղների վրա կոռոզիոն ազդեցությունը՝ դիմանում է - ջրի պարունակությունը ՝ բացակա Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5կգ-ոց տարաներով:

10	Նավթային լուծիչ /Նեֆրաս /Ս2-80/120/	ՏՊ 38.401-67-108-92 (Բարձր տեսակ) Բենզին – լուծիչ՝ ռետինային արդյունաբերության համար: - խտությունը 20°C դեպքում՝ ոչ ավել 0.7կգ/մ³ - ջերմաստիճանը՝ թորման սկզբի ՝ 80°C-ից ոչ ցածր, 98% թորվում է ոչ բարձր 110°C, - մնացորդը ոչ ավել 1.0%: - արոմատիկ ածխաջրածինների մասնաբաժինը՝ ոչ ավել 1.5%, - յուղային հետքի առաջացման փորձարկում՝ դիմանում է, - ծծմբի ծանգվածային բաժինը՝ 0.001 %-ից ոչ ավել, - ջրի և մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ բացակա - ջրում լուծվող թթուների և հիմքերի պարունակությունը՝ բացակա: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով

Ծանոթություն

1. Եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է ՏՊ-ով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ՏՊ-ի կրկնօրինակը:
2. Ապրանքների ընդունումն իրականացնել արտադրող գործարանի որակի անձնագրի առկայության դեպքում:
3. Ապրանքների մատակարարման պահին պահպանման երաշխիքային ժամկետի մնացորդը ոչ պակաս 80%:
4. Մատակարարման վայրը՝ Կուտայքի մարզ, ք. Աբովյան, Կարմիր բանակայինների փողոց:
5. Եթե ապրանքն առբերող տրանսպորտային միջոցների վրա առկա են տեսադիտարկման և տեղորոշման սարքեր, ապա ՎՔՆ բազաներ մուտք գործելիս դրանք պետք է անջատված լինեն, իսկ տրանսպորտային միջոցների վարորդները պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2020թ. ըստ ամիսների, ընդ որում՝
						ոչ ուշ քան 10.12.2020թ.
1	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Ռ մակնիշի/	կգ	3000	1296	3888000	3000
2	Հակակոռոզիոն յուղեր /Կ-17/	կգ	200	2149.2	429840	200
3	Քսուքներ /Գրաֆիտային/	կգ	1000	1134	1134000	1000
4	Քսուքներ /Քսուք No 9/	կգ	200	4353.6	870720	200
5	Հակակոռոզիոն յուղեր /Ակոռ-1/	կգ	500	1896	948000	500
6	Քսուքներ /ԳՕԻ-54պ/	կգ	5000	1620	8100000	5000
7	Հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ /Ամորտիզացիոն ԱԺ-12տ/	կգ	2000	1608	3216000	2000
8	Քսուքներ /Մածուկ ԱԼԿՄ-1/	կգ	10	38424	384240	10
9	Քսուքներ /Քսուք ՍԱՊՖԻՐ (Վնիի ՆՊ-261)/	կգ	2	76500	153000	2
10	Նավթային լուծիչ /Նեֆրաս /Ս2-80/120/	կգ	260	1788	464880	260

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մոսէքսթրոլ» ՍՊԸ տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-7/59-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 15.12.2020թ., ընդ որում՝
			4-րդ եռամսյակ
1	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Ռ մակնիշի/	09211660/15	3888000
2	Հակակոռոզիոն յուղեր /Կ-17/	09211631/4	429840
3	Քսուքներ /Գրաֆիտային/	24951100/24	1134000
4	Քսուքներ /Քսուք No 9/	24951100/25	870720
5	Հակակոռոզիոն յուղեր /Ակոռ-1/	09211631/5	948000
6	Քսուքներ /ԳՕԻ-54պ/	24951100/26	8100000
7	Հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ /Ամորտիզացիոն ԱԺ-12տ/	09211611/6	3216000
8	Քսուքներ /Մածուկ ԱԼԿՄ-1/	24951100/27	384240
9	Քսուքներ /Քսուք ՍԱՊՖԻՐ (Վնիի ՆՊ-261)/	24951100/28	153000
10	Նավթային լուծիչ /Նեֆրաս /Ս2-80/120/	39831120/4	464880

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մոսէսքո» ՍՊԸ տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-7/59-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-7/59-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը՝	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն